ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

1 մարտի, 2024 թ.

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը գումարվեց 2024 թվականի մարտի 1-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական շենքում: Նիստը վարում էր Հանձնաժողովի նախագահ, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը:

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահ	Լիլիթ Թադևոսյան
Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի անդամ	Հայկ Գրիգորյան
Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ	Խաչատուր Պողոսյան
Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ	Աննա Վարդապետյան
Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան	Անահիտ Մանասյան
Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ	Արա Մկրտչյան
Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի	Պարույր Հովհաննիսյան

նախարարի տեղակալ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ — Սիմոն Բաբայան

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ — Ռուստամ Բաքոյան

Նիստն արձանագրում էր ՀՀ վարչապետի աշխատակազմի արձանագրային բաժնի ավագ մասնագետ Սերգեյ Հովհաննիսյանը:

Ա. Դիլանյանը Հանձնաժողովի հաստատմանը ներկայացրեց նիստի օրակարգային հարցը:

Հանձնաժողովը միաձայն հավանություն տվեց նիստի օրակարգի նախագծին:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Օրակարգային հարց՝ քննարկվեց հավակնորդների կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանության ստուգումն իրականացնելու հարցը:

Հավակնորդների ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովի անդամները ներկայացրեցին անհրաժեշտ փաստաթղթերի հավաստիությունը պարզելու կամ թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատմանը վերաբերող այլ հավելյալ տեղեկություններ պահանջելու մասին առաջարկություններ: Այս կապակցությամբ Հանձնաժողովի անդամներն առաջարկեցին հարցումներ ուղարկել պետական տարբեր մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության, Հայաստանի Հանրապետության պաշտպանության, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություններ, Հայաստանի Հանրապետության Դատական դեպարտամենտ և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ:

Հանձնաժողովի անդամներն առաջարկեցին նաև թվով վեց հավակնորդներից պահանջել վերջիններիս ներկայացրած տեղեկությունների վերաբերյալ հավելյալ փաստաթղթեր և վերացնել որոշ փաստաթղթերում տեղ գտած թերությունները (անհամապատասխանությունները): Շտկումների և փաստաթղթերի ներկայացման համար սահմանվեց 3 աշխատանքային օր: Հանձնաժողովը միաձայն որոշեց՝ փաստաթղթերում առկա թերությունները

շտկելու նպատակով կազմել հարցումների և նամակների նախագծեր, որոնց կապակցությամբ որոշում կկայացնի սույն թվականի մարտի 4-ին գումարվող Հանձնաժողովի հերթական նիստում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ՝

Նիստը վարող՝ **Արման Դիլանյան** **[ստորագրված]**

Լիլիթ Թադևոսյան **[ստորագրված]**

Հայկ Գրիգորյան **[ստորագրված]**

Խաչատուր Պողոսյան **[ստորագրված]**

Աննա Վարդապետյան **[ստորագրված]**

Աննա Վարդապետյան **[ստորագրված]**

Արա Մկրտչյան **[ստորագրված]**

Պարույր Հովհաննիսյան **[ստորագրված]**

Սիմոն Բաբայան **[ստորագրված]**

Ռուստամ Բաքոյան **[ստորագրված]**

Արձանագրող՝ Սերգեյ Հովհաննիսյան **[ստորագրված]**